

---

---

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԻ ԼԵԶՎԱԾԱՆԱԶՈՂԱԿԱՆ  
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ս. Ք., ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Ռ., ԳԱՍՊԱՐՅԱՆ Լ. Ա.

Հայոց ցեղասպանության ճանաչումը հայ ժողովրդի առանցքային և կնճռոտ այն հիմնախնդիրներից է, որոնց մասին շատ է խոսվել ու գրվել: Կատարվել են քաղաքական, պատմագիտական, հոգեբանական, սոցիալական բազմաբնույթ վերլուծություններ, ստեղծվել է բազմաթիվ ու բազմալեզու պատկանելի գրականություն, և հենց այդ միջոցներով է, որ հարցը ներկայացվել է միջազգային հանրությանն ու արժանացել հայ և օտարազգի ուսումնասիրողների ուշադրությանը<sup>1</sup>:

Դեռևս Լոզանի կոնֆերանսից հետո՝ 1923-1965 թթ. միջազգային ընկերակցությունը վարպետորեն շրջանցեց ու մոռացության մատնեց Հայոց ցեղասպանության խնդիրը: Մոռացության այդ պատր հնարավոր եղավ քանդել 1965 թ. Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի օրերին Խորհրդային Հայաստանում բռնկված պահանջատիրության ցույցերով, 1970-ականներին Սփյուռքում ծավալված ազգային-ազատագրական պայքարով, որոնք էլ ավելի մեծ ուժով կրկին հատնելու էին 1988-ի Արցախյան շարժումով: Ազատագրական պայքարի ծավալմանը զուգընթաց, համաշխարհային լրատվամիջոցներն ու գիտական մամուլը բառացիորեն ողողվեցին հայությանն ու Հայոց ցեղասպանությանը վերաբերող տեղեկություններով, հարցազրույցներով, հոդվածներով, գրքերով, հաղորդաշարերով ու ֆիլմերով, փաստաթղթերի ժողովածուներով ու ականատեսների վկայություններով:

Հիմնահարցերի գիտական մշակման ուղղությամբ, անտարակույս, մեծ արդյունքների է հասել նախ և առաջ հայ պատմագիտական և հրապարակախոսական միտքը: Միաժամանակ լայն ծավալի աշխատանք է կատարվել նաև թուրքերենով, ռուսերենով, արևմտաեվրոպական և այլ լեզուներով: Օրինակ՝ 1900-1960-ական թվականներին միայն Ֆրանսիայում լույս է տեսել շուրջ

---

<sup>1</sup> *Տե՛ս Gellner E. Nations and Nationalism. Oxford, 1983, Hovhannisian R. (ed.), The Armenian Genocide in Perspective (important essays by scholars). New Jersey: New Brunswick, 1986, Dadrian V. A Review of the Main Features of the Genocide (Journal of Political and Military Sociology. Vol. 22, 1994), Dadrian V. The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence & Oxford, 1995, Dadrian V. The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A Case Study of Distortion and Falsification. Canada, The Zoryan Institute, 1999, Ներսիսյան Ս., Պատմության կեղծարարները. հոդվածներ և հաղորդումներ, Ե., 1998, Այվազյան Ա., Հիմնատարրեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, մաս 1, Ե., 2004, Sassounian H. The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2005, Glendale, CA, 2005.*

400 անուն գիրք՝ նվիրված հայ ազատագրական շարժումներին, հայկական ջարդերին և հատկապես 1915 թ. եղեռնագործությանը<sup>2</sup>:

Միջազգային ասպարեզում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ կատարված քայլերը լայն առումով որոշակի քաղաքական ու իրավական արժեք ունեն Հայոց ցեղասպանության դատապարտման միջազգային գործընթացի զարգացման տեսանկյունից և փորձում են դրական ազդեցություն գործել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա: Մակայն, եթե փորձենք սթափ գնահատել իրավիճակը, ապա կարելի է նկատել, որ այդ զարգացումները մերթընդմերթ բացասական ուղղվածություն են ձեռք բերում՝ լինելով Հայոց ցեղասպանության առնչությամբ հնչող ոչ ճիշտ հարցադրումներ, մեկնաբանություններ և նույնիսկ վնասակար կարծրատիպեր: Հարկ է նշել, որ եթերից և մամուլով հաճախ հնչող նմանօրինակ հարցադրումներն ու կամա թե ակամա արված սխալ մեկնաբանությունները խեղաթյուրում են պատմական իրականությունը և ապակողմնորոշում համաշխարհային հանրությանը: Օրինակ՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի ընդունման փաստի առնչությամբ հնչած միտքը՝ «եթե հողերը վերադարձնեն, ի՞նչ ենք անելու այնտեղ ապրող վեց միլիոն քրդերին», կամ հաճախ հանդիպող «եղեռնի ճանաչումը մեկ օրվա, մեկ տարվա հարց չէ ... Թուրքիան պետք է փոխվի... ճանաչի ցեղասպանությունը» սխալ մեկնաբանությունը<sup>3</sup> լայն հասարակայնության մեջ կարող են ձևավորել այն թյուր տեսակետը, թե, եթե Թուրքիան չի ճանաչում ցեղասպանությունը, ուրեմն հարցը փակուղի է մտնում, և, որպեսզի հարցը լուծվի, պետք է սպասել մինչև Թուրքիան փոխվի:

Ակնհայտ է, իհարկե, որ Թուրքիան ամեն կերպ ձգնում է խոչընդոտել այս հարցի զարգացումը, առավել ևս ընդունումը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն վարելով հակահայկական լայնածավալ քարոզչություն, որի մեջ Հայոց ցեղասպանության հերքումը նրա առաջնահերթ խնդիրներից է<sup>4</sup>: Հետաքրքրական է, օրինակ, որ թուրք քաղաքագետ-պատմաբան Քամուրան Գուրունը, որը հակահայկական գաղափարախոսության ակտիվ քարոզողներից է, խուսափելով «ցեղասպանություն» (genocide) միավորի գործածությունից, իր գիրքն անվանել է «The Armenian File»

<sup>2</sup> Տե՛ս Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), խմբ.՝ Հովհաննիսյան Պ., Խուրշուդյան Լ., Մելքոնյան Ա., Մկրտչյան Լ. և ուրիշներ, Ե., 2001, էջ 11-34:

<sup>3</sup> [www.oukhtararati.com/haytararutyunner/Datapartman-jamanaky.php](http://www.oukhtararati.com/haytararutyunner/Datapartman-jamanaky.php)

<sup>4</sup> Նույնիսկ միայն թուրքական Ermeni Arařtırmaları Enstitüsü կազմակերպության համացանցային կայքի անկախությունը բավարար է վերը նշվածը հիմնավորելու համար (տե՛ս [www.eraren.org](http://www.eraren.org)):

պատճառաբանելով, որ թուրքական դիվանագիտության մեջ Հայկական հարց հասկացություն առհասարակ գոյություն չունի<sup>5</sup>:

Ավելին՝ թուրքական պետությունը զանազան միջոցներով ակտիվորեն օժանդակում է արտասահմանյան տարբեր լրատվամիջոցների, գիտական ամբիոնների, անհատ մասնագետների և նույնիսկ թարգմանչական գործունեությամբ զբաղվողների՝ թուրքական տեսակետներն արտահայտելու և պաշտպանելու համար, քանի որ նրան լրջորեն մտահոգում է Մեծ Թուրանի ստեղծմանը խոչընդոտող հայկական «սեպի» խնդիրը<sup>6</sup>:

Գաղտնիք չէ, որ, թուրք-ամերիկյան հարաբերությունների ընթացքով պայմանավորված, միջազգային մամուլում երբեմն թուլանում կամ ուժեղանում են հակահայկական հրապարակումները, որոնք միտված են պաշտպանելու Թուրքիայի ժխտողականությունը Հայկական հարցում և նպատակ ունեն սիրաշահելու նրան: Այս առումով մասնավորապես աչքի են ընկնում “Mond”, “Figaro”, “The Times” և այլ թերթեր ու լրատվական գործակալություններ<sup>7</sup>, որոնք, կիրառելով լրագրողական ու գիտական շարադրանքի տարաբնույթ լեզվական միջոցներ ու ոճական հնարներ, գործադրելով գրողական տարբեր սկզբունքներ ու մեթոդներ, պատմական իրողությունները ներկայացնում են իրենց համար նախընտրելի քողի տակ, հերքում անհերքելի ճշմարտությունը:

Հայոց եղեռնին վերաբերող նյութերի այսպիսի հեղեղի պայմաններում հարցի մի շարք կողմեր, այդուհանդերձ, դեռևս լուրջ ուսումնասիրության կարիք ունեն: Այսօր հատուկ ուշադրության է արժանի լեզվական այն փաստերի քննությունը, որոնք պատմական իրողությունների աղավաղման ու խեղաթյուրման տեքստային մեխանիզմների կարևոր տարրեր են: Ու թեև Հայոց ցեղասպանության հարցի արդարացի պաշտպանությունը հայ պատմադիվանագիտական մտքի որդեգրած քաղաքականության կարևորագույն խնդիրներից է, և դրանց պատմական, քաղաքական ու դիվանագիտական հայեցակերպերը պակաս ուշադրության չեն արժանացել, տեքստային մեխանիզմների (բառեր, բառակապակցություններ, շարույթային միավորներ ու շարահյուսական կառույցներ, տերմիններ ու տեղանուններ, նաև բազմաբնույթ ոճական հնարներ) քննությունն այսօր արդիական է ու հրատապ:

Սույն ուսումնասիրության մեջ լեզվական միավորները քննում ենք ինչպես լեզվաբանական, այնպես էլ գործարանական տեսանկյունից միջլեզվական

<sup>5</sup> Gurun K. *The Armenian File*. New York, 1985.

<sup>6</sup> Uras E. *The Armenians in History and the Armenian Question*. Istanbul, Documentary Publication, 1988.

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ, Scheffer D. *Defuse the Lexicon of Slaughter*. // *New York Times*, *The International Herald Tribune*. February 24, 2012. <http://www.nytimes.com/2012/02/24/opinion/defuse-the-lexicon-of-slaughter.html?ref=armeniangenocide>

հաղորդակցման գործընթացի բարելավման, դրա արդյունավետության բարձրացման միտումով:

Միջազգային մամուլում և գրականության մեջ, ինչպես նաև դիվանագիտական փաստաթղթերում նշանային տարրերի անսովոր զուգորդմամբ ձեռք բերված ներակա իմաստի ընկալմանը մեծապես նպաստում են վերջին տասնամյակներում լեզվաբանության մեջ լայն տարածում ստացած խոսքային ակտերի և հաղորդակցման ներկայման տեսությունների հեռանկարային ուղղությունները<sup>8</sup>: Փորձ է արվում մեկնողական մոտեցման շրջանակում քննության առնել տեքստը խոսողի/հեղինակի (լեզվական նշաններ վերարտադրող անձի) համոզողական ներգործման և լսողի/ընթերցողի (լեզվական նշաններ մեկնաբանող անձի) ընկալման տեսանկյուններից: Տարբեր մեկնաբանություններում տեղ գտած աղավաղված փաստերի տեքստաբանական քննությունը պահանջում է համակողմանի և համակարգված մոտեցում, որը ենթադրում է նաև անդրադարձ հարցի պատմական հայեցակերպին՝ որպես տվյալ տեսքի ուղղաձիգ համատեքստի համապատասխան բաղադրատարրի<sup>9</sup>:

Որպես օրինակ կարելի է բերել միջազգային մամուլում հաճախ շրջանառվող «եղեռն» բառի տարաբնույթ մեկնաբանությունները, որոնք առիթ դարձան անդրադառնալու վերոհիշյալ միավորի լեզվագիտական ուսումնասիրությանը<sup>10</sup>:

Տարաբնույթ մեկնաբանությունների տեքստաբանական վերլուծությունը խնդրին առնչվող հետազոտական ոլորտում կարևոր հարցադրում է, որը նպատակ ունի միջազգային ասպարեզում առկա մեկնաբանություններում քննել Հայոց ցեղասպանության այս կամ այն արժևորումների լեզվական դրսևորումները: Դրանց վերհանումը հնարավորություն կընձեռի բացահայտելու այդ արժևորումների ճշմարտացիությունը, նաև աղավաղման լեզվական միջոցներն ու տեքստաբանական մեթոդները: Մեզանում նման դրսևորումներին առանձին անդրադարձեր արվել են, սակայն դրանք, ցավոք, չեն կրում համակարգված բնույթ<sup>11</sup>:

<sup>8</sup> Levinson S. *Pragmatics*. Cambridge, 1983, Griffiths P. *An Introduction to English Semantics and Pragmatics*. Edinburgh, 2006, Widdowson H. *Discourse Analysis*. Oxford, 2007 և այլն:

<sup>9</sup> Ахманова О., Гюббенет И. *Вертикальный контекст как филологическая проблема (Вопросы языкознания, 1977, N 3)*, Гаспарян С. *Фигура сравнения в функциональном освещении, Е., 2000*.

<sup>10</sup> Տե՛ս Գասպարյան Ա., «Եղեռն» բառի համարժեքության դաշտը անգլերենում (Վէժ համահայկական հանդես, 2010, N 1, նաև *Armenian Folia Anglistika. International Journal of English Studies*, 2010, N 1-2).

<sup>11</sup> Տե՛ս, օրինակ, Այվազյան Ա., Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Ե., 1998, Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ):

Այս առումով «հայ» և «թուրք» բառերի քննությունը որոշակի հենքային կարևորություն ունի: Ոճականորեն չեզոք այս միավորները նախ և առաջ մատնացույց են անում ազգային պատկանելություն և անգլերենի բացատրական հեղինակավոր բառարաններից շատերում մեկնաբանվում հետևյալ կերպ. հայ – գլխավորապես արևմտյան Ասիայում գտնվող հինավուրց Հայաստան երկրում բնակվող ժողովրդի ներկայացուցիչ (սակայն նաև Մերձավոր Արևելքում սփռված և Նոր Աշխարհ արտագաղթած), թուրք – Ադրիատիկից մինչև Օխոտսկ ընկած տարածքում ապրող, թուրքական լեզուներ խոսող ասիական բազմաթիվ ժողովուրդներից որևէ մեկի ներկայացուցիչ, ցեղային առումով՝ խառնածին, ծագումը կապում են Ալթայյան լեռների և Արևմտյան Սիբիրի հետ<sup>12</sup>:

Հայտնի է, որ հայ մարդու կերպարի բնութագրության մեջ, ըստ բյուզանդական աղբյուրների, հատկապես կարևորվել է նրա արիությունը, և, ըստ երևույթին, պատահական չպետք է համարել այն վկայությունը, որ Բյուզանդիայում հայ և քաջ հասկացությունները համարվել են հոմանիշ<sup>13</sup>: «Թուրք» բառի իմաստային կառուցվածքում առանձնացվում են “one who is cruel, hardhearted, or tyrannical”<sup>14</sup> (մեկը, որ դաժան է, քարսիրտ, բռնապետ) կամ “applied to anyone having qualities attributed to the Turks: a cruel, savage, rigorous, or tyrannical man”<sup>15</sup> (կիրառվում է ցանկացած մեկի վերաբերյալ, որն ունի թուրքերին բնորոշ հատկություններ՝ դաժանություն, վայրագություն, կարծրություն, բռնապետականություն) փոխաբերական իմաստները:

Հետաքրքրական է, որ քննական տարբեր ուսումնասիրություններում և գեղարվեստական անդրադարձներում նույնպես այս երկու միավորները մշտապես հակադրվում են իրար: Այդ իրարամերժությունը առկա է նաև թե՛ հայի և թե՛ թուրքի ընկալման մեջ և վկայում է այն մասին, որ երկու կողմերն էլ միմյանց նկատմամբ անառողջ ու անհանգիստ վերաբերմունք ունեն: «Խորթության» այս անխուսափելի գոյավիճակը<sup>16</sup>, անշուշտ, բացատրելի է. հայի դեպքում՝ իր ժողովրդի նկատմամբ թուրքի իրականացրած ցեղասպանությամբ, որը համապատասխան հոգեվիճակ է ձևավորել հայի մեջ, դարձել նրա ազգային ինքնության անբաժանելի մասնիկը, թուրքի դեպքում՝ իր նախնիների իրականացրած ոճրագործության պատասխանատվությունը ստանձնելու հոգեբանական «դժվարությամբ»:

<sup>12</sup> Տե՛ս Webster’s Third New International Dictionary, Massachusetts, 1981, p. 119, p. 2465.

<sup>13</sup> Տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, հ. Ե, Թեոփանեսի շարունակող, էջ 313, ծնթ. 56 (ըստ՝ Այվազյան Ա., Հայկական ինքնության հիմնաքարերը. լեզու, պատմություն, Ե., 2007, էջ 28):

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 2465:

<sup>15</sup> The Shorter Oxford English Dictionary on Historical Principles: Vol.2, Oxford, 1978, p. 2382.

<sup>16</sup> Դինք Հ., Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան, Ե., 2009:

Դեռևս 1853 թ. ամերիկյան “Daily Tribune” թերթում տպագրած հոդվածներից մեկում Կ. Մարքսը արտահայտում է այն միտքը, որ թուրքերի ներկայությունը Եվրոպայում լրջորեն խոչընդոտում է տարածաշրջանի զարգացումը, իսկ կրոնական ֆանատիզմով համակված թուրքերի ամբոխն ընդունակ է տապալել ցանկացած հնարավոր առաջընթաց<sup>17</sup>:

Այս երկու միավորների՝ Հենրի Մորգենթաուի դիտարկումները “The Murder of a Nation” աշխատության մեջ հիմնվում են նրա անձնական փորձի վրա<sup>18</sup>: Այսպես՝

*This conviction possessed the leaders of the Union and Progress Party and now began to have a determining effect upon Turkish national life and Turkish policy. Essentially the Turk is a **bully** and a **coward**; he is brave as a lion when things are going his way, but cringing, abject, and nerveless when reverses are overwhelming him.*

(H. Morgenthau, The Murder of a Nation, p. 4)

Թուրքերի բնութագրության մեջ **bully** (person who uses strength or power to coerce others by fear<sup>19</sup> – անձ, որը ուժ և իշխանություն է գործադրում՝ վախեցնելով բռնատիրելու համար) գոյականի կիրառությունը զգալի չափով հաստատում է վերը նշված բառարանային փոխաբերական իմաստների առկայության հիմնավորվածությունը: Այն թեև առերևույթ կարող է քաջության տպավորություն ստեղծել, սակայն խորքային իմաստով մոտենում է հաջորդող **coward** (a person having little or no bravery<sup>20</sup> – վախկոտ, անձ, որը գրեթե կամ բոլորովին քաջություն չունի) միավորին: Հատկանշական է “**he is brave as a lion when things are going his way**” (առյուծ է կտրում, երբ դեպքերն իր օգտին են զարգանում) համեմատական դարձույթի և դրան հաջորդող **cringing, abject, nerveless** միավորների գործածությունը, որոնք լավագույնս բացահայտում են թուրքական ինքնության մեջ, դեսպանի ընկալմամբ, ակնհայտ դրսևորվող քծնողության, ստորության ու կորովի բացակայության<sup>21</sup> բնութագրակները: Ակնհայտ է, որ այստեղ գործ ունենք անձնական փորձով ստուգված և սեփական ընկալումներով ճշգրտված որակների հետ:

Հետագա շարադրանքում Հ. Մորգենթաուն անդրադառնում է թուրքական ռասայական քաղաքականության հոգեբանական նախադրյալներին:

<sup>17</sup> Տե՛ս <http://ziontruth.blogspot.com/2007/11/was-karl-marx-zionist-neocon-bat-yeor.html>

<sup>18</sup> Տե՛ս **Morgenthau H.** *The Murder of a Nation*, New York, 1974. 1913-1915 թթ. Հ. Մորգենթաուն եղել է Միացյալ Նահանգների դեսպանը Թուրքիայում և այդ ընթացքում իրականացված ջարդերի ականատեսը:

<sup>19</sup> Տե՛ս *The Concise Oxford Dictionary*. Oxford: Oxford University Press, 1976, p. 130.

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 236:

<sup>21</sup> **Kouyoumdjian M.** *A Comprehensive Dictionary English-Armenian*. Beirut, 1981, p. 312, p. 4, p. 911.

I was really witnessing a remarkable development in race psychology – an almost classical instance of reversion to type. The **ragged, unkempt** Turk of the twentieth century was vanishing and in his place was appearing the Turk of the fourteenth and the fifteenth, the Turk who had swept out of his Asiatic fastnesses, conquered all the powerful peoples in his way, and founded in Asia, Africa, and Europe one of the most extensive empires that history has known. If we are properly to appreciate this new Talaat and Enver and the events which now took place, we must understand the Turk who, under Osman and his successors, exercised this mighty but **devastating influence** in the world. We must realize that **the basic fact underlying the Turkish mentality is its utter contempt for all other races**. A fairly **insane pride** is the element that largely explains **this strange human species**. The common term applied by the Turk to the Christian is “**dog**”, and in his estimation this is no mere rhetorical figure; he actually looks upon his European neighbours as far less worthy of consideration than his own domestic animals. “My son,” an old Turk once said, “do you see that herd of swine? Some are white. Some are black, some are large, some are small – they differ from each other in some respects, but **they are all swine**. So it is with Christians.

(H. Morgenthau, The Murder of a Nation, p. 5-6)

Հատվածում ակնատեսի վստահությամբ հեղինակն անդրադառնում է XX դարասկզբին թուրքերի հոգեբանության մեջ կատարվող հետադարձ գործընթացներին, երբ ճգնաժամ ապրող կայսրության ցնցոտիավոր (**ragged**)<sup>22</sup> ու զզզված արտաքինով (**unkempt**)<sup>23</sup> թուրքի մեջ արթնանում է XIV-XV դարերի թուրքի տիպարը, որը, ոչնչացնելով բազմադարյան քաղաքակրթություններ, ներխուժեց ու հիմնավորվեց Եվրոպայում, ասիական շատ երկրներում, Աֆրիկայում և կործանարար ազդեցություն գործեց աշխարհի վրա (**devastating influence in the world**): Դժվար թե հնարավոր լինի ճիշտ արժևորել Թալեաթի ու Էնվերի կերպարները, եթե պատկերացում չունես, թե ինչ ավերածությունների էր ընդունակ Օսմանի և նրա հաջորդների ժամանակների թուրքը: Հեղինակը նկատում է թուրքերի հոգեբանության և մտածողության հիմքում ընկած այն կարևոր փաստը, որ վերջիններս ակնհայտ և լիակատար արհամարհանք են տաժում մյուս ռասաների և հատկապես քրիստոնյա ազգերի նկատմամբ: Եվ մի թե այս՝ բացարձակապես չհիմնավորված ինքնաներշնչանքն ու ինքնամեծարումը կարող են հպարտանալու հուսալի հիմք համարվել: Սա չպատճառաբանված իրողություն է, որը քաղաքական գործիչը դուրս է համարում հավասարակշռված դատողությունների հնարավոր շրջանակից և որակում **insane pride** (խելագար հպարտություն) որոշյալին բառակապակցությամբ, որը, անուղղակիորեն, նույնպես թուրքի տեսակը (**strange human species**) բնութագրող լեզվական միավոր է: Միայն այս հենքի վրա է, որ զարմանալի չեն հնչում թուրքերի կողմից քրիստոնյա ազգերին տրվող **dog** (**շուն**) կամ

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 1064:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 1327:

*swine (խոզ) որակումները: Մեջբերելով ծեր թուրքի՝ քրիստոնյաների հասցեին արտահայտած կարծիքը՝ «որոշները սև են, որոշները՝ խոշորամարմին, որոշներն էլ՝ փոքրամարմին: Նրանք ինչ-որ կերպ տարբերվում են իրարից, բայց բոլորն էլ խոզեր են: Նույնը կարելի է քրիստոնյաների մասին ասել», հեղինակը փորձում է հնարավորինս ճշգրիտ ներկայացնել արհամարհանքի ու ստորացման այն մթնոլորտը, որը հիշյալ ժամանակահատվածում թուրքերի կողմից պարտադրվում էր քրիստոնյա ազգերին և որոշ չափով նաև եվրոպական հարևաններին, որոնց նույնպես նրանք ստորակարգում էին իրենց և նույնիսկ իրենց ընտանի կենդանիներին:*

*«Թուրք» հասկացույթը Հ. Մորգենթաուի ընկալումներում ձեռք է բերում նաև բացասական գնահատողական այլ երանգներ՝ այն ավերիչ ու կործանարար դերի հետևանքով, որ թուրքերը կատարեցին Միջագետքում՝ այն վերածելով անապատի, այն թշվառության, որում հայտնվել էին Մերձավոր Արևելքի մեծ քաղաքները, նաև այն իրողության, որ հպատակ ազգերին վերաբերվում էին իբրև իրենց ստրուկների: Նրանցից հափշտակելով քաղաքակրթության շնորհները՝ հիմա նրանց ասում էին ամբողջ հոգով:*

*Over all this part of the world the Turk now swept as a **huge, destructive force**. Mesopotamia in a few years became a desert; the great cities of the Near East were reduced to misery, and the subject peoples became slaves. Such **graces of civilization** as the Turk has acquired in five centuries have practically all been taken from the subject peoples whom he so greatly despises. ...*

*The Turks have learned little of European art or science, they have established very few educational institutions, and **illiteracy is the prevailing rule**. The result is that poverty has attained a degree of sordidness and **misery** in the Ottoman Empire which is almost unparalleled elsewhere. **The Turkish peasant lives in a mud hut; he sleeps on a dirt floor; he has no chairs, no tables, no eating utensils, no clothes except the few scant garments which cover his back and which he usually wears for many years.***

...

*They could not understand that conquered people were anything except slaves. When they took possession of a land, they found it occupied by a certain number of camels, horses, buffaloes, dogs, swine, and human beings. ...*

*The sultans similarly erected the several peoples, such as the Greeks and the Armenians, into separate “millets”, or nations, not because they desired to promote their independence and welfare, but because they regarded them as **vermin**, and therefore disqualified for membership in the Ottoman state.*

(H. Morgenthau, The Murder of a Nation, p.7-9)

*Հաստատվածում ուշադրություն են գրավում բացասական առնչանակային երանգավորում ունեցող միավորները (destructive force, Mesopotamia in a few years became a desert, the great cities were reduced to misery, the subject peoples became slaves, illiteracy is the prevailing rule), որոնց կիրառությունը այսպես թե այնպես միտված է լրացնելու ցեղասպանություն իրականացնող թուրքի դիմանկարի աչքի զարնող գծերը, ընդ որում,*



էթէ, օրինակ, *destructive force* բառակապակցությունն ուղղակիորեն է բնութագրում թուրքին՝ որպէս կործանիչ ուժ, ապա մնացած ասույթները դա մատնանշում են միջնորդավորված ձևով՝ ներկայացնելով համատարած թշվառության (*misery*), անգրագիտության (*illiteracy*), ոչ քաղաքակիրթ ապրելակերպի (*the Turkish peasant lives in a mud hut; he sleeps on a dirt floor*) ու կենցաղի (*he has no chairs, no tables, no eating utensils, etc.*) այն իրավիճակը, որը ոչ միայն երկրում ավելի ու ավելի խորացող տնտեսական ճգնաժամի արդյունքն էր, ինչպէս նկատում է հեղինակը, այլ, մեր համոզմամբ, նաև ազգային ավանդույթներին հարազատ մնալու սովորույթը: Ու թէն իր տիրապետության հինգ դարերի ընթացքում թուրքը շատ է յուրացրել հպատակ քրիստոնյա ազգերի քաղաքակրթությունը, այդուհանդերձ, նա քիչ բան է սովորել եվրոպական արվեստից ու գիտությունից:

Հասովածում *graces of civilization* (քաղաքակրթության շնորհները) կապակցության զուգակցումը ասույթի շարունակության հետ միտված է ընթերցողին հասկանալի դարձնելու, որ հեղինակի գնահատողական վերաբերմունքը թուրքերի կողմից նվաճված տարածքում ապրող քրիստոնյա ազգերի նկատմամբ դրական է, ի հակադրություն թուրքերի վերաբերմունքի, որոնք նրանց ընդունում էին իբրև ստրուկների (*they could not understand that conquered people were anything except slaves*): Ավելին՝ նրանց «տեղահանման ու մեկուսացման» գործողությունները պայմանավորված չէին «ժողովրդավարական» Թուրքիայի՝ քրիստոնյա ազգերի անկախությունն ու բարեկեցությունը խթանելու «ազնիվ ձգտումներով», այլ միայն նրանով, որ քրիստոնյաներին համարում էին անհավատներ (*infidel Christians*) և նույնիսկ վնասակար կենդանիներ (*vermin*):

Պատկերը բոլորովին այլ է Հ. Մորգենթաուի՝ հայի կերպարի բնութագրություններում:

*In the north-eastern part of Asia Minor, bordering on Russia, there were six provinces in which the Armenians formed the largest element in the population. From the time of Herodotus this portion of Asia has borne the name of Armenia. The Armenians of the present day are the direct descendants of the people who inhabited the country three thousand years ago. Their origin is so ancient that it is lost in fable and mystery. There are still undeciphered cuneiform inscriptions on the rocky hills of Van, the largest Armenian city, that have led certain scholars – though not many, I must admit – to identify the Armenian race with the Hittites of the Bible. What is definitely known about the Armenians, however, is that for ages they have constituted the most civilized and most industrious race in the eastern section of the Ottoman Empire. ...*

*Everywhere they are known for their industry, their intelligence, and their decent and orderly lives. They are so superior to the Turks intellectually and morally that much of the business and industry had passed into their hands. With the Greeks, the Armenians constitute the economic strength of the empire...*

*Though this period the Armenians have regarded themselves not as Asiatics, but as Europeans. They speak an Indo-European language, their racial origin is believed by scholars to be Aryan, and the fact*

that their religion is the religion of Europe has always made them turn their eyes westward. And out of that western country, they have always hoped, would some day come the deliverance that would rescue them from their *murderous masters*.

(H. Morgenthau, *The Murder of a Nation*, p. 16-17)

Հաստվածից պարզ երևում է, որ քաղաքագետը ոչ միայն տիրապետում է հայերին առնչվող պատմական ու աշխարհագրական իրողություններին, այլև խոր համակրանքով է համակված այդ քաղաքակիրթ ու աշխատասեր ժողովրդի (**most civilized and most industrious race in the eastern section of the Ottoman Empire**) նկատմամբ, որն իրեն ավելի շատ եվրոպացի է համարում, քան ասիացի: Եվ եթե թուրքին նա առանց վերապահության ընկալում է որպես քոչվոր ցեղերի<sup>24</sup>, ապա տարակույս անգամ չունի, որ հայերի ծագումնաբանությունը հասնում է մինչև Աստվածաշնչում հիշատակվող խեթերը: Դեռևս Հերոդոտոսի ժամանակներից ի վեր Ասիայի տվյալ հաստվածը կրել է Արմենիա անունը, իսկ ներկայիս հայերը հենց այն ժողովրդից են սերում, որը դեռ երեք հազար տարի առաջ բնակվել է այդ երկրում: Մրա վառ ապացույցն են Վանի ժայռաբլուրների վրա պահպանվող սեպագիր արձանագրությունները: Իսկ այն հանգամանքը, որ երկրի արդյունաբերական ու գործարար հիմնական օղակները գլխավորապես հայերն էին զբաղեցրել, կարելի էր բացատրել միայն ու միայն վերջիններիս խելքով ու աշխատասիրությամբ, բարոյահոգեբանական կերտվածքով ու քաղաքակրթության մակարդակով. հատկանիշներ, որոնցով գերակայում էին թուրքերին:

Հաստվածում դրական առնչանակային երանգավորում ունեցող միավորների (*intelligence, decent, orderly, civilized, industrious* և այլն) կիրառությունը անմիջապես բացահատում է հեղինակի դիրքորոշումը հայի ընդհանրացված կերպարի արժևորման հարցում, ընդ որում, քաղաքագետը պատահական չի համարում այն իրողությունը, որ արյունոտ սերերի լծից ազատվելու իրենց հույսերն ու ակնկալիքները հայերը մշտապես կապում են արևմուտքի հետ, քանի որ, ըստ գիտական ուսումնասիրությունների՝ եվրոպացիների նման նրանք էլ արիացիներ են, նրանց լեզուն նույն հնդեվրոպական հիմքն ունի, և նույնպես քրիստոնյաներ են:

Նշված աշխատության մեջ Հ. Մորգենթաուի՝ «հայ» և «թուրք» կերպարների լեզվական, հոգեբանական ընկալումների դրսևորումներ ենք գտնում նաև երկխոսությունների մեջ, ընդ որում, «թուրք» միավորի հասկացական դաշտը էլ ավելի է հագենում բացասական լիցքերով Թալեաթի կերպարի՝ հեղինակի ընկալման լույսի ներքո: Այսպես՝

<sup>24</sup> Morgenthau H., նշվ. աշխ., էջ 6-7:

Technically, of course, I had no right to interfere. According to the cold-blooded legalities of the situation, the treatment of Turkish subjects by the Turkish Government was purely a domestic affair; unless it directly affected American lives and American interests, it was outside the concern of the American Government. When I first approached Talaat on the subject, he called my attention to this fact in no uncertain terms. **This interview was one of the most exciting** which I had had up to that time . . .

So I began to talk about the Armenians at Konia. I had hardly started when **Talaat's attitude became even more belligerent. His eyes lighted up, he brought his jaws together, leaned over toward me, and snapped out:**

**“Are they Americans?”**

The implications of this question were hardly diplomatic; it was merely a way of telling me that the matter was none of my business. In a moment Talaat said this in so many words.

“The Armenians are not to be trusted,” he said, “besides, what we do with them does not concern the United States.”

(H. Morgenthau, The Murder of a Nation, pp.58- 59)

Հաստատվածը ներկայացնում է Հ. Մորգենթաուի գրույցը Թալեաթի հետ, որը վերաբերում էր դարասկզբին կայսրությունում կատարվող անցուդարձերին: Հեղինակի որակմամբ՝ դա մինչ այդ ունեցած իր գրույցներից ամենաշատն էր հուզմունք ու մտահոգություն պատճառել իրեն: Թեև դիվանագետը քաջ գիտակցում էր, որ իր միջամտությունը իրավական առումով որևէ հիմնավորում չունի, քանի որ թուրքահպատակներին վերաբերող հարցերը թուրքական կառավարության ներքին խնդիրներն էին, քանի դեռ որևէ ձևով չէին առնչվում ամերիկյան շահերին, այդուհանդերձ, նա չէր կարող զերծ մնալ այդ երկխոսությունից, քանի որ նախ և առաջ ինքը մարդ էր և չէր կարող սառը անտարբերությամբ վերաբերվել մարդկային ճակատագրերին ընդհանրապես, առավել ևս, որ իրեն համարում էր հայերի բարեկամը<sup>25</sup>: Այլ կերպ ասած՝ թեև դեսպանի գրույցը Թալեաթի հետ դուրս էր նրա դիվանագիտական առաքելության շրջանակից, այդուհանդերձ, նա հույս ուներ իր միջամտությամբ Թալեաթին հետ պահել ռճրագործությունից, իսկ քրիստոնյա ազգերին և հատկապես հայերին՝ ոչնչացումից: Սակայն երկխոսության ընթացքում դեսպանը բացահայտում է Թալեաթին՝ որպես չարության ու ատելության մարմնացում, որի **“Are they Americans?”** հարցի խորքում թաքնված ներակա իմաստային երանգները հազիվ թե կարելի լիներ դիվանագիտական առումով ընդունելի համարել:

Հայտնի է, որ հարցական ասույթի խոսողական-կատարողական բուն նպատակը, ընդհանուր առմամբ, հարցադրումն է, սակայն տվյալ կոնկրետ խոսքային իրադրության մեջ **“Are they Americans?”** ասույթը սոսկ ձևով է հարցական, քանի որ այն նպատակառոտորակ չէ համապատասխան տեղեկություն ստանալուն: Այլ կերպ

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 58- 59:

ասած՝ թեև տվյալ երկխոսության մեջ այն հնչում է որպես դեսպանի բարձրացրած խնդրին առնչվող հարց, այդուհանդերձ, որպես այդպիսին՝ չունի կոնկրետ հասցեատեր, և տվյալ համատեքստում չի իրացվում հարցական նախադասությանը բնորոշ խոսողական-կատարողական ուժը: Խոսողի հաղորդակցական մտադրությունը կռահելու նպատակով լսողը կիրառում է եզրահանգման որոշակի ռազմավարություն, որը զարգանում է հետևյալ քայլերով: Նախ՝ կարելի է ենթադրել, որ համաձայն հարցական նախադասությունները կարգավորող կանոնների՝ լսողից ակնկալվում է “yes” կամ “no” պատասխանը: Սակայն խոսքային իրադրությունն այնպիսին չէ, որ ցույց տրվի խոսողի հետաքրքրությունը լսողի հնարավոր պատասխանի նկատմամբ: Այն ենթադրությունը, որ խոսողը հարցում է անում պատասխանի ակնկալիքով, թվում է ոչ տեղին: Մնում է ենթադրել, որ խոսողի ասույթը տեղեկատվություն խնդրող իրական հարց չէ և ունի թաքնված, խորքային ներխոսական նպատակ: Ո՞րն է այդ նպատակը: Ելնելով համատեքստի բովանդակությունից՝ կարելի է տալ հետևյալ հնարավոր մեկնաբանությունը. խոսողը պարզապես իր դժգոհությունն է արտահայտում և խոսակցին հորդորում չմիջամտել: Այլ հնարավոր ներխոսական նպատակի հերքման պարագայում ասույթին վերագրվում է հորդորի իլոկուտիվ ուժը: Այն, ինչ խոսողը նպատակ ունի հաղորդելու, հետևյալն է. **“I don’t appreciate your deep concern about or sympathetic attitude towards Armenians. Don’t interfere, it’s none of your business”**: Բնարկե, իրական հաղորդակցման ընթացքում այս քայլերը կատարվում են ենթագիտակցաբար՝ հիմնված հաղորդակցման ընդհանուր սկզբունքների, նաև ընդհանուր հենքային գիտելիքների և, որ ամենակարևորն է, ասույթի համատեքստի վրա:

Կասկածից վեր է, որ տվյալ ասույթը այդ խոսքային իրադրության մեջ ձեռք է բերում լրացուցիչ հաղորդակցական իմաստ և միտված է իրականացնելու խոսողի երկու նպատակները՝ հասկացնել, որ իրեն բոլորովին դուր չի գալիս հայերի ճակատագրի նկատմամբ խոսակցի մտահոգությունը և անուղղակիորեն պարտադրել հեռու մնալ ու չմիջամտել հայ-թուրքական հարաբերությունների ընթացքին: Այսպիսով, տվյալ ասույթը միաժամանակ իրացնում է երկու գործառույթ՝ ներակա և անուղղակի<sup>26</sup>, ընդ որում, դրանց իրացման հավանականությունն արդեն առկա է **Talaat’s attitude became even more belligerent** դարձվածում:

Ինչ վերաբերում է ցեղասպանության իրականացման՝ Թալեաթի վճռականությանն ու անդրդվելիությանը, ապա կարելի է նկատել, որ հատվածում

<sup>26</sup> Ներակա և անուղղակի ասույթների մասին տե՛ս Giora R. *On Our Mind: Saliency, Context, and Figurative Language*. Oxford, 2003, pp. 63-153, Colston H. A. Katz, *Figurative Language Comprehension*. London, 2005, Griffiths P. *An Introduction to English Semantics and Pragmatics*. Edinburgh, 2006.

դրանք դրսևորվում են հարալեզվական տարբեր միջոցներ նշող միավորներով. **brought his jaws together** (ատամներն իրար սեղմեց), **snapped out** (չարությամբ նետեց ատամների արանքից):

Թալեաթի կերպարին բնորոշ ֆանատիզմը բացահայտվում է նաև նրա հետագա դատողություններում: Այսպես՝

*“It is no use for you to argue,” Talaat answered, “we have already disposed of three quarters of the Armenians; there are none at all left in Bitlis, Van, and Erzeroum. The hatred between the Turks and the Armenians is now so intense, that we have got to finish with them. If we don’t, they will plan their revenge”.*

*“If you are not influenced by humane considerations,” I replied, “think of the material loss. These people are your business men. They control many of your industries. They are very large tax-payers. What would become of you commercially without them?”*

*“We care nothing about the commercial loss,” replied Talaat. “We have figured all that out and we know that it will not exceed five million pounds. We don’t worry about that. I have asked you to come here so as to let you know that our Armenian policy is absolutely fixed and that nothing can change it. We will not have the Armenians anywhere in Anatolia. They can live in the desert but nowhere else”.*

*I still attempted to persuade Talaat that the treatment of the Armenians was destroying Turkey in the eyes of the world, and that his country would never be able to recover from this infamy.*

*“You are making a terrible mistake,” I said, and I repeated the statement three times.*

*“Yes, we may make mistakes,” he replied, “but” – and he firmly closed his lips and shook his head – “we never regret.”*

(H. Morgenthau, The Murder of a Nation, pp.66-67)

Թալեաթի խոստովանությունն այն մասին, որ այլևս ոչ մի հայ չի մնացել ո՛չ Բիթլիսում, ո՛չ Վանում և ո՛չ էլ Էրզրումում, նույնքան անսքող է ու լկտի, որքան գոջման լիակատար բացակայությունը (**we never regret**), որը նա նշում է անհողողող վճռականությամբ: Այնպես որ դեսպանի վիճարկումներն այլևս անօգուտ են (**it is no use for you to argue**): Նույնիսկ երկրի ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը, հեղինակի համոզմամբ, օրեցօր ավելի է խորանում հայերի տեղահանման ու բնաջնջման հետևանքով, չի կարող գոջում ծնել Թալեաթի մեջ, իսկ զուտ մարդկային ու մարդասիրական նկատառումները պարզապես խորթ են նրան (**If you are not influenced by humane considerations ... think of the material loss**): Վերջինս պատրաստ է անտեսել անգամ այն փաստը, որ Թուրքիայի կարևոր գործարարներն ու արդյունաբերողները, նաև գլխավոր հարկատուները հենց հայերն են (**These people are your business men. They control many of your industries. They are very large tax-payers**): Նա չի կարևորում նաև այն հանգամանքը, որ հայերի նկատմամբ իրականացվող գործողություններն անդառնալիորեն անարգում են երկրի հեղինակությունը աշխարհում (... **was destroying Turkey in the eyes of the world**), և այդ անարգանքը Թուրքիան երբեք չի կարողանալու հաղթահարել (**his country would never be able to**

*recover from this infamy*): Այսպիսով, երկխոսությունը ճիշտ ուղղությամբ զարգացնելու և Թալեաթին ամեն կերպ համոզելու՝ դեսպանի ռազմավարությունն ապարդյուն է անցնում. ոչ մի զոջում, Թալեաթը մնում է անդրդվելի, նույնիսկ եթե ընդունի իրենց թույլ տված սխալի ահավորությունը (*Yes, we may make mistakes ... but we never regret*): Հաստատվածում կարևոր լեզվաճանաչողական նշույթ է “... **our Armenian policy is absolutely fixed and ... nothing can change it**” ասույթը, որը բացահայտում է երիտթուրքական կառավարության՝ Հայկական հարցում որդեգրած քաղաքականության ծրագրվածությունը (**absolutely fixed**<sup>27</sup> - բացարձակապես վճռված) և իրականացման անշրջելիությունը (**nothing can change it**): Բանն այն է, որ fix բայի Past Participle դերբայական ձևը (*fixed*) իր հիմքում վաղակատարության գաղափարն ունի (վաղուց արդեն վճռված է), և այն հանգամանքը, որ այդ բառերն արտաբերում է այդ ժամանակահատվածում Թուրքիայի ներքին գործոց նախարար Թալեաթը, որը նաև իշխող «Միություն և առաջադիմություն» կուսակցության առաջնորդներից է, ապա կասկածի տեղ չի մնում այն մասին, որ նրանց իրականացրած ցեղասպանությունը (մեկ ու կես միլիոն զոհեր) չէր կարող տարերային գործողությունների արդյունք լինել:

Հայերի նկատմամբ Թալեաթի մոլի վերաբերմունքի ամփոփ պատկերը երևում է դեսպանի հետ վարած հետագա զրույցներից մեկի ժամանակ:

Talaat's attitude towards the Armenians was summed up in the proud boast which he made to his friends: "**I have accomplished more** toward solving the Armenian problem in three months than Abdul Hamid accomplished in thirty years!" (p. 71).

(H. Morgenthau, *The Murder of a Nation*, p. 71)

Հաստատվածը ներկայացնում է Թալեաթի՝ ինքնագոհ պարծենկոտությամբ արված հայտարարությունը. Արդուլ Համիդի երեսնամյա ջանքերը Հայկական հարցի լուծման ճանապարհին չեն կարողացել այն արդյունքն ապահովել, որին նա հասավ ընդամենը երեք ամիսների ընթացքում (**I have accomplished more**):

Սակայն դեսպանը մի վերջին անգամ որոշում է կրկին անդրադառնալ Հայկական խնդրին՝ թեև արդեն հիանալի պատկերացնելով, թե որն է Թալեաթի էությունը և ընդհանրապես Թուրքիայի որդեգրած քաղաքականությունն այս հարցում, շատ էլ հույս չունեք դրական արդյունքի հասնելու (**another appeal would be useless**): Բայց և այնպես այդ հարցն ամիսներ շարունակ այնպես էր ճնշում իր միտքն ու հոգին (**the subject ... had rested so heavily on my mind for many months**), որ չէր կարող չդիմել:

<sup>27</sup> *St' u The Concise Oxford Dictionary. Oxford, 1976, p. 396.*

Հայերի մասին դեսպանի հարցը լսելուն պես Թալեաթի աշխույժ ու դրական տրամադրությունն անմիջապես անհայտացավ (*Talaat's geniality disappeared in an instant*), դեմքը պրկվեց (*his face hardened*), աչքերը կրկին բոցավառվեցին գիշատչի բնագործով (*the fire of the beast lighted up his eyes once more*), և նա արձագանքեց, որ անիմաստ է այդ մասին խոսելը, ամեն ինչ ավարտված է, նրանց հարցն արդեն լուծված է (*We are through with them. That's all over*):

*And now for the last time I spoke on the subject that had rested so heavily on my mind for many months. I feared that another appeal would be useless, but I decided to make it.*

*"How about the Armenians?"*

*Talaat's geniality disappeared in an instant. His face hardened and the fire of the beast lighted up his eyes once more.*

*"What's the use of speaking about them?" he said, waving his hand. "We are through with them. That's all over".*

*Such was my farewell with Talaat. "That's all over" were his last words to me.*

(H. Morgenthau, The Murder of a Nation, p.120-121)

Հաստատվածում *"the fire of the beast lighted up his eyes"* փոխաբերական արտահայտությունը, կարծես, Հ. Մորգենթաուի՝ Թալեաթի դիմանկարն ամբողջացնող վերջին վրձնահարվածն է՝ հազեցած դաժանության, ֆանատիզմի ու գիշակերության թանձր երանգներով: Փոխաբերության հիմքում առկա զուգահեռականությունը Թալեաթի՝ հայի արյան մոլուցքից բոցավառվող հայացքի և իր զոհին հռչոտելու պատրաստ վայրի գազանի միջև լրացնում են ընթերցողի պատկերացումը ոչ միայն Թալեաթ-անհատի, այլև այն արատավոր ազգային գաղափարախոսության մասին, որի ինքնամոռաց կրողն ու ջատագովն էր նա:

Շարադրանքի մի այլ հաստատվածում Հ. Մորգենթաուն մասնավոր «Թալեաթ» կերպարից անցում է կատարում դեպի ընդհանուր՝ «թուրք» կերպարը: Այսպես՝

*"Why can't you let us do with these Christians as we please?"*

*I had frequently remarked that the Turks look upon practically every question as a personal matter, yet this point of view rather stunned me. However, it was a complete revelation of Turkish mentality; the fact that, above all considerations of race and religion, there are such things as **humanity and civilization**, never for a moment enters their mind. They can understand a Christian fighting for a Christian and a Jew fighting for a Jew, but such abstractions as **justice and decency** form no part of their conception of things.*

(H. Morgenthau, The Murder of a Nation, pp. 63)

Համատեքստում բացահայտվում են թուրք ազգին բնորոշ արմատացած կարծրատիպեր (*the Turks look upon practically every question as a personal matter - գործնականում թուրքերն ամեն հարցի նայում են իրենց անձնական դիտանկյունից*) և, ինչպես բնորոշում է Մորգենթաուն, թուրքն անկարող է ընկալել այնպիսի

*վերացական ու բարձր գաղափարներ, ինչպիսիք են **humanity and civilization** (մարդկություն ու քաղաքակրթություն), **justice and decency** (արդարություն ու պարկեշտություն)՝ արժեքներ, որոնք վեր են ռասայականությունից ու կրոնից:*

*Այսպիսով, Հայոց ցեղասպանության և դրան առնչվող արժարձումներում էապես կարևոր է լեզվական այն տարարնույթ միջոցների քննությունը, որոնք խոսքային այս կամ այն հրադրությունը ներկայացնող տեքստերում լայն առումով կատարում են լեզվաճանաչողական նշույթների գործառույթ և խթանում պատմաքաղաքական իրողությունների ճանաչողության գործընթացը:*

**ЛИНГВОКОГНИТИВНЫЕ ОСОБЕННОСТИ  
ИНТЕРПРЕТАЦИЙ ГЕНОЦИДА АРМЯН**

ГАСПАРЯН С. К., АРУТЮНЯН Г. Р., ГАСПАРЯН Л. А.

**Резюме**

Исследование лингвокогнитивных характеристик геноцида армян на основе книги Г. Моргентау “The Murder of a Nation” выявляет те лингвокогнитивные маркеры, изучение которых способствует пониманию историко-политической реальности Западной Армении в 1915 году.